սուրեայ վաղճանեցաւ ի ձեռաց այլազգեաց», «թվին ՊԴ» (= 1355), (Ցաւել. Ա. 62, պատկ. 133)։ Արձանագրութիւնը լուսանկարուած է էստամբաժից եւ արժանի է ուշադրութեան իւր հնագրական ձեւերով։

Այսուհետեւ մեր աղբիւրները միայն յիշատակարաններն են, այն էլ կցկտուր։ Կէս դարից աւելի կեանարժանութեամբ կոչիմ առաջնորդ սուրբ ուխտիս . . . », առաջնորդի անունը պակաս է կամ եղծուած և գրուած է նորա եղբօր Ցովասափի և սորա որդու անունը (*)։ Բայց մենք ի վիճակի ենք յայտնելու, որ առաջնորդը Գալուստ գրիչն էր, «սուտանուն աբեղայ», եւ եղբօր անուն էլ Ցորդանան էր, սորա որդիքը, Մարտիրոս քահանայ և Խաչատուր սարկաւագ, միւս եղբայրները Գինոս, Խաւիկ, Պետրոս և Պաւղոս. Գալուստ աբեղայի հօրեղբայրն էր Դանէլ աբեղայ, որին վարժապետ է անուանում։ Ցիշում է և իւր մարմնաւոր ծնողներին՝ Սամուէլ քահանայ և Մամախաթուն։ Ձեռագիրը աւետարան է, մագաղաթ, բոլորգիր, հասարակ նկարազարդուած ոմն Մկրտչի ձեռքով, ՋԽ (= 1491) թուին «ի բռնակալութե. աշխարհիս (նշանագրով) Հայոց և Պարսից Եաղուպ բէկի եւ ի հայրապետութե. տն. Սգիս. կաթղկսի. . . . ի յածապահ գաւառ Բուժկան ի յերկնհնդէտ եւ ի գերահռչակ ուխտս Կեչառուս, ի դրան մաւրս լուսոյ սբ. Աստուածնիս եւ հրաշափառ սբ. Գրիգոր կաթղիկէիս եւ Աւագ սբ. Նշանիս, որ իմովս անարժանութիւ. կոչիմ սպասաւոր սբ. ուխտիս» (**)։ Նոյն Գալուստ աբեղան նոյն թուականին գրել է մի աւետարան, որի յիշատակարանը բառացի նոյն է նախընթացի հետ եւ գրուած է «ի յաստուածապահ գաւառ Ծաղկանց ի յերկնահանդիստն եւ ի գերահռչակ ուխտս Կեչառուս» (***)։

Վաթսուն տարուց աւելի անցնելուց յետոյ ՌԺ (= 1561) թուին յիշւում է Փիլիպպոս անունով մէկը, որ նկարել է մի աւետարան «ի հռչակաւոր ուխտս Կեչառուաց սբ. Լուսաւորչիս եւ ժա. անուն եկեղեցւոյս». գնողն է Մատթէոս արքեպիսկոպոս, որի ծնողներն են Էտիլպէկ և Մարիան. ապա յիշւում են Մինաս քահանայ, Վարդանչի, Միրանչի, Ցենիպէկ . . . Շմաւոն եպիսկոպոս . . . Խաչատուր եպիսկոպոս (****)։ Նոր Բայազիտի եկեղեցու ձեռագիրներից մէկը ըստ Ջալալեանի (Բ. 126) «ի թվին Հայոց ՌԻԷ (= 1578) յառաջնորդութեան Գեղամայ Կարապետ արքեպիսկոպոսի եւ Կեչառուայ վերադիտողի, քաջ փիլիսոփայի Փիլիպպոս եպիսկոպոսի», գրչութեամբ սորա աշակերտ Առաքել սարկաւագի եւ արդեամբ Շնոհուոր տիկնոջ, գրուած է մի աւետարան (*****)։ Մատթէոս գրիչը «ի յերկիրս Ծաղկընու, ի հրաչակաւոր



Պատկեր 133.

չառիսի վիճակի մասին տեղեկութիւն չունինք. միայն 1364 թուին յիշւում է «Տէր Ցովհաննէս Կեչառուաց Ս. Լուսաւորչին» (*), ապա 1491 թուին Ալիշան բերում է մի կիսեղծ յիշատակարան, գրուած «ի ս. ուխտն Կեչառուս ի դրան սուրբ Աստուածածնի և Ս. Գրիգոր կաթուղիկէիս եւ առ Ս. Նշանիս, որ իմովս

(*) Ալիշան, Այրարատ, 47։

(*) Անդ, 267։

(**) Ձեռ. Սեւանի, N° 14, այժմ Էջմ. N° 3989։ Սոյն աւետարանի մասին յիշատակութիւն, Սմբատեան, Գեղարքունի, 397։

(***) Սմբատեան, Գեղարքունի, 48։

(****) Ձեռ. Էջմ. N° 3603, Աւետարան, մագաղաթ, լաւ բոլորգիր, նկարազարդ. չորս աւետարանիչներից միայն Մատթէոս և Մարկոս մնացած իրենց սկզբնազարդերով, իսկ Ղուկասի և Ցովհաննիսի միայն սկզբնազարդերը մնացած։ Կան և լուսանցքի զարդեր, բայց խոնաւութիւնից շատերը փչացած. յիշատակարանը Ցաւել. Բ. 42։

(*****) Սմբատեան, Գեղարքունի, 55 և 355։